ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Ն 79 - Ա 01 մարտի 2023 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԷԴ. ՊՈՂՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Ն 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՖՅԱ ԽԼՈՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԿՆՔՎԱԾ Ն 591 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան Ն 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստի 2023 թվականի հունվարի 3-ի արձանագրությունն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունը, ինչպես նաև Սոֆյա Խլոյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան Ն 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սոֆյա Խլոյանի հետ 2023 թվականի մարտի 1-ից կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 01.03.2023-01.03.2028թթ.:

2. Սոֆյա Խլոյանի հետ 2023 թվականի մարտի 1-ից լուծել 2018 թվականի փետրվարի 28-ին կնքված N 591 աշխատանքային պայմանագիրը:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840504

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք. Գավառ